ՀՀ Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ

08.03.2024

Սիրելի՛ կանայք, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի առթիվ:

Դուք ձեր սիրով և հոգատարությամբ, բարությամբ և նվիրումով աշխարհն ավելի լավն ու բարի եք դարձնում, մեղմում եք դժվարություններն ու օրհասական խնդիրները: Անուրանալի են ձեր դերն ու ջանասիրությունը՝ ուղղված մեր հայրենիքի բարօրությանը, սերունդների կրթադաստիարակչական հսկայական աշխատանքին, արժանապատիվ և ազգային արժեքներով ապրող քաղաքացի կրթելուն:

Շնորհակալ ենք ձեզ անվերապահ աջակցության, նվիրումի և տարբեր ոլորտներում հայրենանվեր գործունեության համար:

Առանձնահատուկ երախտագիտությամբ շնորհավորում եմ մեր հայրենիքի համար կյանքը նվիրաբերած զինվորների մայրերին, կանանց ու քույրերին: Առողջություն ու բարեկեցություն եմ մաղթում ձեզ:

Սիրելի՛ կանայք, թող երջանկությունը միշտ ապրի ձեր սրտերում, կանացի հմայքը, պայծառ ժպիտը, քնքշությունն ու գրավչությունը ձեր հավերժական ուղեկիցները լինեն:

Դուք արժանի եք ուշադրության, սիրո, աջակցության տարվա այս ու առհասարակ բոլոր օրերին…